

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2023թ. հունիսի 12-ի նիստի

Խորհրդի 41 անդամներից ներկա էին 26-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուլյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունը առկա և հեռակա ուսուցման բակալավրիատում և հեռակա ուսուցման մագիստրատուրայում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքի և արդյունքների վերաբերյալ (զեկ.՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):

2. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահի հաշվետվությունը:

3. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի՝ առկա ուսուցման ասպիրանտների ատեստավորում:

1. **ԼՍԵՑԻՆ.** Պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունը առկա և հեռակա ուսուցման բակալավրիատում և հեռակա ուսուցման մագիստրատուրայում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքի և արդյունքների վերաբերյալ (զեկ.՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):

Պետական քննական հանձնաժողովների նախագահներն ամփոփ տեղեկություններ ներկայացրեցին ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքի և արդյունքների վերաբերյալ՝ գործընթացի դրական կողմերի հետ միասին արձանագրելով նաև առկա խնդիրները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ղազինյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Հ.Խաչիկյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Ս. Դիլբնադյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Ա. Հայկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունել ի գիտություն (հաշվետվությունները կցվում են):

2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահի հաշվետվությունը:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահ Մարիա Հովհաննիսյանն ամփոփ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում ՈԻԳԸ ծավալած գործունեությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ղազինյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Ա. Մարգարյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Գ. Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի՝ առկա ուսուցման ասպիրանտների ատեստավորում

3.1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Սվետլանա Կիրակոսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սվետլանա Կիրակոսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 18 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, աշխատում է ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակում, հանդես է եկել գիտական զեկուցմամբ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանին, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ Արման Բաբախանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Մարգարյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արման Բաբախանյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 17 կրեդիտ, ներառյալ՝ 10 կրեդիտ պրակտիկայից, 7 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Գևորգ Բարսեղյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Մարգարյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գևորգ Բարսեղյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 33 կրեդիտ, ներառյալ՝ 23 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, ներկայումս աշխատում է ատենախոսության առաջին գլխի վրա, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.4. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Հայկ Ավետյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Մարգարյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայկ Ավետյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 17 կրեդիտ, ներառյալ՝ 10 կրեդիտ պրակտիկայից, 7 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.5. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ Գոհար Ավագյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գոհար Ավագյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 60 կրեդիտ, ներառյալ՝ 4 կրեդիտ կրթական բաղադրիչից, 4 կրեդիտ պրակտիկայից, 52 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.6. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ Մերի Խաչատրյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մերի Խաչատրյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 50 կրեդիտ, ներառյալ՝ 6 կրեդիտ պրակտիկայից, 44 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.7. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Հենրիկ Խունդկարյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հենրիկ Խունդկարյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 11 կրեդիտ կրթական բաղադրիչից, աշխատում է ՀՀ Վճռաբեկ դատարանում որպես վարչական պալատի դատավորի օգնական, հանդես է եկել գիտական զեկուցմամբ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանին, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.8. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Վահագն Թանգամյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վահագն Թանգամյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 19 կրեդիտ կրթական բաղադրիչից, աշխատում է «Դիջիթեյն» ՍՊԸ-ում որպես իրավաբան, հանդես է եկել գիտական զեկուցմամբ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանին, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.9. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Կարոլինա Հարությունյանի ատեստավորման

մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Վ.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարոլինա Հարությունյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 68 կրեդիտ, ներառյալ՝ 33 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, 25 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.10. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ Վիկտորյա Հակոբջանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Վ.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վիկտորյա Հակոբջանյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել անհրաժեշտ կրեդիտները կրթական բաղադրիչից և պրակտիկայից, հանձնել է մասնագիտական քննությունները, ավարտին է հասցրել է ատենախոսության երկու գլուխները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.11. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ Էլինա Գեղամյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Վ.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Էլինա Գեղամյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել անհրաժեշտ կրեդիտները կրթական բաղադրիչից և պրակտիկայից, 23 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ամբողջությամբ պատրաստել է ատենախոսության առաջին գլուխը, երկրորդ գլխի առաջին պարագրաֆը, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.12. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Դավիթ Ղարիբյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Հայկյանցը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դավիթ Ղարիբյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 19 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, անհրաժեշտ կրեդիտներ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.13. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Տաթևիկ Մարտիրոսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Հայկյանցը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տաթևիկ Մարտիրոսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 79 կրեդիտ, այդ թվում՝ 19 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, 50 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.14. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ Կարեն Մելիքսեթյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Հայկյանցը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարեն Մելիքսեթյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել անհրաժեշտ բոլոր կրեդիտները կրթական բաղադրիչից և պրակտիկայից, ավարտին է հասցրել թեկնածուական ատենախոսությունը, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.15. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ Հայկ Բաղդասարյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Հայկյանցը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայկ Բաղդասարյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել անհրաժեշտ բոլոր կրեդիտները կրթական բաղադրիչից և պրակտիկայից, ավարտին է հասցրել թեկնածուական ատեստախոսությունը, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.16. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Դավիթ Բակլաչյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Հայկյանցը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դավիթ Բակլաչյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 19 կրեդիտ, այդ թվում՝ 33 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, 60 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.17. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ Արմեն Մեղրյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոցենտ Ա.Ասատրյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արմեն Մեղրյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 18 կրեդիտ, այդ թվում՝ 8 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, տպագրել է ատենախոսության թեմայով գիտական հոդվածներ, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.18. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ Պետիկ Մկրտչյանի

ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պետիկ Մկրտչյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել անհրաժեշտ բոլոր կրեդիտները, տպագրել է ատենախոսության թեմայով գիտական հոդվածներ, հանձնել է մասնագիտական քննությունները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.19. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ Հրանտ Զիլավյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հրանտ Զիլավյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել անհրաժեշտ բոլոր կրեդիտները, տպագրել է ատենախոսության թեմայով գիտական հոդվածներ, հանձնել է մասնագիտական քննությունները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.20. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա տարվա ասպիրանտ Լուսինե Հովհաննիսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լուսինե Հովհաննիսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 85 կրեդիտ, այդ թվում՝ 30 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, 45 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.21. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա տարվա ասպիրանտ Հրայր Հովակիմյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հրայր Հովակիմյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 80 կրեդիտ, այդ թվում՝ 35 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, 35 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուլջյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ՝

<<Իրավագիտություն>> մասնագիտությամբ բակալավրիատի ծրագրի

2022-2023 ուս.տարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների

պաշտպանության արդյունքների վերաբերյալ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ << Իրավագիտություն>> մասնագիտությամբ բակալավրիատի ծրագրի 2022-2023 ուս.տարվա ընդհանուր թվով 49 շրջանավարտների ավարտական աշխատանքների՝ 2023թվականի մայիսի 24-ից 26-ը կայացած պաշտպանությունների արդյունքները, ընդհանուր առմամբ, վկայում են շրջանավարտների պատշաճ գիտական պատրաստվածության մասին:

Մասնավորապես՝ ասվածը հիմնավորվում է ստորև ներկայացվող արդյունքներով՝

ԱՌԿԱ	ուսանող	գերագ. (18-20)	լավ (13-17)	բավ. (8-12)	անբավ. (0-8)	չներկ.
Քրեական իրավունք	25	9	9	7	—	—
Քրեական դատավարություն	24	10	9	5	—	—
Ընդամենը	49	19	18	12	-	-

Ներկայացված արդյունքներից հետևում է, որ շրջանավարտների ընդհանուր թվից <<գերագանց>> գնահատական է ստացել **38,7%**-ը, <<լավ>>՝ **36,7%**-ը, <<բավարար>>՝ **24,4%**-ը, իսկ <<անբավարար>> գնահատական ստացողներ և պաշտպանությանը չներկայացողներ չեն արձանագրվել:

Մասնավորապես՝ <<Քրեական իրավունք>>-ից ավարտական աշխատանք պաշտպանած **25** շրջանավարտներից մեկ շրջանավարտ գնահատվել է <<20>>, չորսը՝ <<19>>, չորսը՝ <<18>>, մեկը՝ <17>, չորսը՝ <16>, մեկը՝ <<15>>, երկուսը՝ <<14>> միավոր, մեկը՝ <<13>>, մեկը՝ <<12>>, երեքը՝ <<11>>, երկուսը՝ <<9>>, մեկը՝ <<8>> միավոր: Հետևաբար, տվյալ առարկայից **միջին հավասարակշռված թվաքանական գնահատականը կազմել է 15,04 միավոր:**

<<Քրեական դատավարություն>> առարկայից ավարտական աշխատանք պաշտպանած **24** շրջանավարտներից մեկ շրջանավարտ գնահատվել է <<20>>, երեք շրջանավարտ գնահատվել է <<19>>, վեցը՝ <<18>>, երեքը՝ <17>, երեքը՝ <<16>>, երկուսը՝ <<15>>, մեկ ուսանող՝ <<13>> < մեկը՝ <<12>>, երեքը <<10>>, մեկը՝ <<8>>: Հետևաբար, տվյալ առարկայից **միջին հավասարակշռված թվաքանական գնահատականը կազմել է <<15,04>> միավոր:**

Վերոգրյալը հաշվի առնելով՝ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ համապատասխան երկու ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների և ուսանողների կողմից բարեխիղճ և պատշաճ աշխատանք է կատարվել թե

ավարտական աշխատանքների պատրաստման, թե հրապարակային պաշտպանությանը նախապատրաստվելու և իրականացնելու ուղղությամբ:

Անհրաժեշտ է հատուկ նշել, որ նշված աշխատանքներից մեծ մասում ներկայացված էին ուսանողների սեփական հետազոտությունների արդյունքները և դրանց հիման վրա կատարված եզրահանգումներն ու գործող օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունները: Հատկապես բարձր գնահատականներ ստացած շրջանավարտները քաջատեղյակ էին ոչ միայն գործող օրենսդրական ակտերում առկա իրավակարգավորումներից, այլև իրավակիրառ պրակտիկայում գոյություն ունեցող խնդրահարույց, տարակարծիք մեկնաբանություններ առաջացնող խնդիրներից և շրջանառության մեջ դրված համապատասխան օրենքներից: Ավելին՝ աշխատանքներում անդրադարձ էր կատարվել նաև միջազգային օրենսդրությանը և պրակտիկային:

Հարկ է նշել նաև, որ ուսանողները տիրապետում էին նյութին և կարողանում էին հստակ ներկայացնել իրենց աշխատանքում տեղ գտած հիմնադրույթները, ինչպես նաև, ըստ էության, սպառիչ կամ բավարար կերպով պատասխաններ տալ քննական հանձնաժողովի անդամների հարցերին:

Ավարտական աշխատանքների վերաբերյալ գիտական ղեկավարների կարծիքները և գրախոսականները լիովին համապատասխանում էին ներկայացվող չափանիշներին:

Աշխատանքների մեծ մասում ներկայացված էին իրավակիրառ պրակտիկայի նյութերը և դրանց վերլուծության արդյունքները: Ուսանողները գլխավորապես օգտվել էին ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից: Սակայն, առավել հաճախ, դրանք պարզապես վկայակոչվել էին: Մինչդեռ, առավել ցանկալի կլինեք, եթե դրանք մանրամասն վերլուծվեին, այդ թվում՝ քննադատական մոտեցման դիրքերից՝ անդրադառնալով այդ որոշումներում տեղ գտած վիճահարույց և ոչ միանշանակ ընկալվող դիրքորոշումներին: Այդ առումով, թերևս, նպատակահարմար է պայմաններ ստեղծել, որպեսզի ուսանողները հնարավորություն ունենան ծանոթանալու ավարտական աշխատանքի թեմային առնչվող պրակտիկ նյութերին: Նման պայմաններ ստեղծելու տեսանկյունից, կարծում եմ, անելիք ունեն հատկապես գիտական ղեկավարները:

Ամփոփելով վերը քննարկված հանգամանքները՝ կարելի է եզրակացնել, որ քննական հանձնաժողովը ձևավորել էր պատշաճ քննական մթնոլորտ և իրականացրել է իր հիմնական գործառնությունները:

Հատկապես հարկ է կարևորել այն հանգամանքը, որ ավարտական աշխատանքների և դրանց պաշտպանության գնահատումներն իրականացվել են հանձնաժողովի բոլոր անդամների, ինչպես նաև գիտական ղեկավարների ու գրախոսողների կարծիքները հաշվի առնելով՝ ի օգուտ շրջանավարտի: Հատկանշական է, որ նրանցից յուրաքանչյուրի կողմից նշանակված գնահատականներում էական տարբերություններ չկային: Ավելին՝ գնահատականը որոշելիս չի անտեսվել նաև շրջանավարտների ցուցաբերած առաջադիմությունը բակալավրիատի ուսումնառության ընթացքում:

Պետական քննական

հանձնաժողովի նախագահ

Ա. Հովհաննիսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ՝
<<Իրավագիտություն>> մասնագիտությամբ բակալավրիատի ծրագրի և հեռակա՝
<<Քրեական արդարադատություն և փաստաբանություն>> մագիստրոսական ծրագրի՝
2022-2023 ուս.տարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների և
մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ

2023 թվականի հունիսի 8-ին կայացած՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ <<Իրավագիտություն>> մասնագիտությամբ բակալավրիատի ծրագրի 2022-2023 ուս.տարվա՝ ընդհանուր թվով 11 շրջանավարտների ավարտական աշխատանքների, ինչպես նաև **հեռակա՝** <<Քրեական արդարադատություն և փաստաբանություն>> մագիստրոսական ծրագրի **2023թ. հունիսի 7-ին կայացած մագիստրոսական թեզերի** պաշտպանությունների արդյունքները, ընդհանուր առմամբ, վկայում են շրջանավարտների պատշաճ գիտական պատրաստվածության մասին:

Մասնավորապես՝ ասվածը հիմնավորվում է ստորև ներկայացվող արդյունքներով՝

ՀԵՌԱԿԱ ԲԱԿԱԼԱՎՐԱՏ	ուսանող	գերագ. (18-20)	լավ (13-17)	բավ. (8-12)	անբավ. (0-8)	չներկ.
Քրեական իրավունք	7	2	2	3	—	—
Քրեական դատավարություն	4	1	1	2	—	—
Ընդամենը	11	3	3	5	-	-

Ներկայացված արդյունքներից հետևում է, որ 11 շրջանավարտների ընդհանուր թվից <<գերազանց>> գնահատական է ստացել 27.2%-ը, <<լավ>>՝ 27,2%-ը, <<բավարար>>՝ 45,4%-ը, իսկ <<անբավարար>> գնահատական ստացողներ և պաշտպանությանը չներկայացողներ չեն արձանագրվել:

Մասնավորապես՝ <<Քրեական իրավունք>>-ից ավարտական աշխատանք պաշտպանած 7 շրջանավարտներից մեկ շրջանավարտ գնահատվել է <<19>>, մեկը՝ <<18>>, մեկը՝ <<16>>, մեկը՝ <15>, մեկը՝ <11>, մեկը՝ <<10>>, մեկը՝ <<8>>:

Հետևաբար, տվյալ առարկայից **միջին հավասարակշռված թվաբանական գնահատականը կազմել է 13,85 միավոր:**

<<Քրեական դատավարություն>> առարկայից ավարտական աշխատանք պաշտպանած 4 շրջանավարտներից մեկ շրջանավարտ գնահատվել է <<19>>, մեկ շրջանավարտ գնահատվել է <<13>>, մեկը՝ <<12>>, մեկը՝ <<9>> միավոր: Հետևաբար, տվյալ առարկայից **միջին հավասարակշռված թվաբանական գնահատականը կազմել է <<13,25>> միավոր:**

Հարկ է նշել, որ նախորդ տարիների մեկ ուսանող հանձնել է պետական քննություն՝ <<Քրեական իրավունք>> և <<Քրեական դատավարություն>> առարկաներից, որից ստացել է <անբավարար>՝ 2 միավոր:

**<<Քրեական արդարադատություն և փաստաբանություն>> մագիստրոսական ծրագրի՝
մագիստրոսների պաշտպանության արդյունքները**

ՀԵՌԱԿԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ	ուսանող	գերազ. (18-20)	լավ (13-17)	բավ. (8-12)	անբավ. (0-8)	չներկ.
Քրեական իրավունք	10	3	7	-	—	—
Քրեական դատավարություն	9	3	5	1	—	—
Ընդամենը	19	6	12	1	-	-

Ներկայացված արդյունքներից հետևում է, որ 19 մագիստրոսների ընդհանուր թվից <<գերազանց>> գնահատական է ստացել **31,5%-ը**, <<լավ>>՝ **63,1%-ը**, <<բավարար>>՝ **5,2%-ը**, իսկ <<անբավարար>> գնահատական ստացողներ և պաշտպանությանը չներկայացողներ չեն արձանագրվել:

Մասնավորապես՝ <<Քրեական իրավունք>>-ից մագիստրոսական թեզ պաշտպանած **10** մագիստրոսներից երկուսը գնահատվել են <<19>>, մեկը՝ <<18>>, երկուսը՝ <<17>>, մեկը՝ <16>, մեկը՝ <15>, մեկը՝ <<14>>, երեքը՝ <<13>> միավոր:

Հետևաբար, տվյալ առարկայից **միջին հավասարակշռված թվաքանական գնահատականը կազմել է 17,4 միավոր:**

<<Քրեական դատավարություն>> առարկայից մագիստրոսական թեզ պաշտպանած **9** շրջանավարտներից մեկ շրջանավարտ գնահատվել է <<20>>, երկու շրջանավարտ գնահատվել է <<18>>, մեկը՝ <<17>>, մեկը՝ <<16>>, երկուսը՝ <15>, մեկը՝ <<13>>, մեկը՝ <<9>> միավոր: Հետևաբար, տվյալ առարկայից **միջին հավասարակշռված թվաքանական գնահատականը կազմել է <<15,66>> միավոր:**

Վերոգրյալը հաշվի առնելով՝ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ համապատասխան երկու ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների և ուսանողների կողմից բարեխիղճ և պատշաճ աշխատանք է կատարվել թե ավարտական աշխատանքների պատրաստման, թե հրապարակային պաշտպանությանը նախապատրաստվելու և իրականացնելու ուղղությամբ:

Անհրաժեշտ է հատուկ նշել, որ նշված աշխատանքներից մեծ մասում ներկայացված էին ուսանողների սեփական հետազոտությունների արդյունքները և դրանց հիման վրա կատարված եզրահանգումներն ու գործող օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունները: Հատկապես բարձր գնահատականներ ստացած շրջանավարտներ որոշակի առումով տեղյակ էին ոչ միայն գործող օրենսդրական ակտերում առկա իրավակարգավորումներից, այլև իրավակիրառ պրակտիկայում գոյություն ունեցող խնդրահարույց, տարակարծիք մեկնաբանություններ առաջացնող խնդիրներից և

շրջանառության մեջ դրված համապատասխան օրենքներից: Ավելին՝ աշխատանքներում անդրադարձ էր կատարվել նաև միջազգային օրենսդրությանը և պրակտիկային:

Հարկ է նշել նաև, որ ուսանողները տիրապետում էին նյութին և կարողանում էին հստակ ներկայացնել իրենց աշխատանքում տեղ գտած հիմնադրույթները, ինչպես նաև, ըստ էության, սպառիչ կամ բավարար կերպով պատասխաններ տալ քննական հանձնաժողովի անդամների հարցերին:

Աշխատանքների մեծ մասում ներկայացված էին իրավակիրառ պրակտիկայի նյութերը և դրանց վերլուծության արդյունքները: Ուսանողները գլխավորապես օգտվել էին ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից: Սակայն, առավել հաճախ, դրանք պարզապես վկայակոչվել էին: Մինչդեռ, առավել ցանկալի կլիներ, եթե դրանք մանրամասն վերլուծվեին, այդ թվում՝ քննադատական մոտեցման դիրքերից՝ անդրադառնալով այդ որոշումներում տեղ գտած վիճահարույց և ոչ միանշանակ ընկալվող դիրքորոշումներին:

Այդ առումով, թերևս, նպատակահարմար է պայմաններ ստեղծել, որպեսզի ուսանողները հնարավորություն ունենան ծանոթանալու ավարտական աշխատանքի թեմային առնչվող պրակտիկ նյութերին: Նման պայմաններ ստեղծելու տեսանկյունից, կարծում եմ, անելիք ունեն հատկապես գիտական ղեկավարները:

Ավարտական աշխատանքների վերաբերյալ գիտական ղեկավարների կարծիքները և գրախոսականները համապատասխանում էին ներկայացվող չափանիշներին: Այնուամենայնիվ, գրախոսականների մասով մեկ հանգամանքի վրա պետք է ուշադրություն դարձնել, մասնավորապես՝ հրապարակվեցին որոշ գրախոսականներ, որոնք բավականին ճշգրիտ և կոշտ դիտողություններ էին պարունակում աշխատանքների վերաբերյալ, սակայն եզրափակիչ մասում նշվում է, որ կատարված դիտողությունները չեն նսեմացնում աշխատանքի որակը, ինչը նման բովանդակության դիտողությունների պայմաններում, աշխատանքի որակի վրա ազդեցություն չունենալու տեսանկյունից, մի փոքր անհասկանալի է:

Ամփոփելով վերը քննարկված հանգամանքները՝ կարելի է եզրակացնել, որ քննական հանձնաժողովը ձևավորել էր պատշաճ քննական մթնոլորտ և իրականացրել է իր հիմնական գործառնությունները:

Հատկապես հարկ է կարևորել այն հանգամանքը, որ ավարտական աշխատանքների և դրանց պաշտպանության գնահատումներն իրականացվել են հանձնաժողովի բոլոր անդամների, ինչպես նաև գիտական ղեկավարների ու գրախոսողների կարծիքները հաշվի առնելով՝ ի օգուտ շրջանավարտի: Հատկանշական է, որ նրանցից յուրաքանչյուրի կողմից նշանակված գնահատականներում էական տարբերություններ չկային:

**Պետական քննական
հանձնաժողովի նախագահ**

Ա. Հովհաննիսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ՝
բակալավրիատի «Եվրոպական և միջազգային իրավունք» մասնագիտացման
2022-2023 ուս.տարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների
պաշտպանության արդյունքների վերաբերյալ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ բակալավրիատի «Եվրոպական և միջազգային իրավունք» մասնագիտացման 2022-2023 ուս.տարվա ընդհանուր թվով **20** շրջանավարտների ավարտական աշխատանքների՝ 2023 թվականի մայիսի 29-ին և 30-ին կայացած պաշտպանությունների արդյունքները, ընդհանուր առմամբ, վկայում են շրջանավարտների պատշաճ մասնագիտական պատրաստվածության մասին:

Մասնավորապես՝ ասվածը հիմնավորվում է ստորև ներկայացվող արդյունքներով՝

ԱՌԿԱ	ուսանող	գերազ. (18-20)	լավ (13-17)	բավ. (8-12)	անբավ. (0-8)	չներկ.
Եվրոպական և միջազգային իրավունք	20	3	9	7	1	—

Ներկայացված արդյունքներից հետևում է, որ շրջանավարտների ընդհանուր թվից <<գերազանց>> գնահատական է ստացել **15%**-ը, <<լավ>>՝ **45%**-ը, <<բավարար>>՝ **35%** և <<անբավարար>>՝ **5%**-ը: Պաշտպանությանը չներկայացողներ չեն արձանագրվել:

Մասնավորապես՝ ավարտական աշխատանքներ պաշտպանած **20** շրջանավարտներից երկու շրջանավարտ գնահատվել է «20», մեկը՝ «18», մեկը՝ «17», երեքը՝ «16», մեկը՝ «15», երկուսը՝ «14», երկուսը՝ «13», մեկը՝ «12», երեքը՝ «11», մեկը՝ «10», երկուսը՝ «9» և մեկը՝ «6» միավոր:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ կարող ենք փաստել, որ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների կողմից ընդհանուր առմամբ բարեխիղճ և պատշաճ աշխատանք է կատարվել թե՛ ավարտական աշխատանքների պատրաստման, թե՛ հրապարակային պաշտպանությանը նախապատրաստվելու և իրականացնելու ուղղությամբ:

Անհրաժեշտ է հատուկ նշել, որ մի շարք աշխատանքներում ներկայացված էին ուսանողների սեփական հետազոտությունների արդյունքները և դրանց հիման վրա կատարված եզրահանգումները: Դրանց արդյունքում արվել են որոշ առաջարկներ ինչպես միջազգային իրավական փաստաթղթերի, ներպետական օրենսդրության, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման ուղղությամբ: Հիշատակման է արժանի բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների կողմից

ավարտական աշխատանքների պաշտպանության ժամանակ արված մի շարք փաստարկումներ, որոնք վկայում էին վերաբերելի իրավական ակտերի կարգավորումների խորը իմացության, դրանց կիրառության արդյունքում վեր հանված խնդիրների և հնարավոր լուծումների պատկերացման մասին:

Հարկ է նշել նաև, որ ուսանողները հիմնականում տիրապետում էին նյութին և կարողանում էին բավարար խորությամբ ներկայացնել իրենց աշխատանքում տեղ գտած հիմնադրույթները, ինչպես նաև, ըստ էության, երբեմն սպառիչ կամ բավարար կերպով պատասխաններ տալ քննական հանձնաժողովի անդամների հարցերին:

Ավարտական աշխատանքների վերաբերյալ գիտական ղեկավարների կարծիքները և գրախոսականները լիովին համապատասխանում էին ներկայացվող չափանիշներին:

Աշխատանքների մեծ մասում ներկայացված էին նաև պրակտիկայի նյութեր և դրանց վերլուծության արդյունքները: Ուսանողները օգտվել էին տարբեր միջազգային ատյանների նախադեպային որոշումներից: Սակայն, առավել հաճախ, դրանք պարզապես վկայակոչվել էին: Մինչդեռ, առավել ցանկալի կլիներ, եթե դրանք մանրամասն վերլուծվեին, այդ թվում՝ քննադատական մոտեցման դիրքերից՝ անդրադառնալով այդ որոշումներում տեղ գտած վիճահարույց և ոչ միանշանակ ընկալվող դիրքորոշումներին:

Այդ առումով, թերևս, նպատակահարմար է պայմաններ ստեղծել, որպեսզի ուսանողները հնարավորություն ունենան ծանոթանալու ավարտական աշխատանքների թեմային առնչվող պրակտիկ նյութերին: Նման պայմաններ ստեղծելու տեսանկյունից, կարծում եմ, կարևոր է ուսանողների համար հետազոտական մեթոդների պատշաճ ներկայացումը, որի ուղղությամբ անելիքներ ունեն հատկապես գիտական ղեկավարները:

Ամփոփելով վերը քննարկված հանգամանքները՝ կարելի է եզրակացնել, որ քննական հանձնաժողովին հաջողվեց ձևավորել պատշաճ քննական մթնոլորտ և իրականացնել իր հիմնական գործառնությունները:

Հատկապես հարկ է կարևորել այն հանգամանքը, որ ավարտական աշխատանքների և դրանց պաշտպանության գնահատումներն իրականացվել են հանձնաժողովի բոլոր անդամների, ինչպես նաև գիտական ղեկավարների ու գրախոսողների կարծիքները հաշվի առնելով՝ ի օգուտ շրջանավարտի: Հատկանշական է, որ նրանցից յուրաքանչյուրի կողմից նշանակված գնահատականներում էական տարբերություններ չկային: Ավելին՝ գնահատականը որոշելիս չի անտեսվել նաև շրջանավարտների ցուցաբերած առաջադիմությունը ուսումնառության ընթացքում:

**Ամփոփիչ ատեստավորման
հանձնաժողովի նախագահ**

Ե. Կիրակոսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ ավարտական աշխատանքների 2023 թ
պաշտպանության մասին

2023 թվականի մայիսի 24-26-ը տեղի ունեցավ իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ ավարտական աշխատանքների
պաշտպանությունը՝ 43 ուսանողից ներկայացել են 40:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը արձանագրել է հետևյալ
արդյունքները.

գերազանց	լավ	բավարար	անբավարար	չներկայացած
18	18	3	1	3

Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներից կարելի է
եզրակացնել բակալավրիատում (առկա) ուսուցման գործընթացի արդյունավետության,
ուսանողների առաջադիմության վերաբերյալ: Առանձնահատուկ անհրաժեշտ է շեշտել
Քաղաքացիական իրավունքի և Քաղաքացիական դատավարության ամբիոնների
դասախոսների բարեխիղճ աշխատանքը մագիստրոսական թեզերի ղեկավարման,
աշխատանքների նկատմամբ պատշաճ հսկողության և բարձր մակարդակի
գրախոսությունների համար: Ավարտական աշխատանքները աչքի էին ընկնում ոչ
միայն տեսական գրականության խորը և բազմակողմանի հետազոտությամբ, այլ նաև
օտարերկրյա փորձի և պրակտիկայում առկա մոտեցումների ուսումնասիրությամբ,
ինչն առավել արժեքավոր է դարձնում կատարված աշխատանքների գիտական :

Այնուամենայնիվ, ցանկանում եմ անդրադառնալ նաև այն բացթողումներին,
որոնք ի հայտ եկան քննական գործընթացի շրջանակներում.

1) Կարծում եմ լուրջ քննարկման նյութ պետք է դառնա ավարտական
աշխատանքների թեմաները: Բացի նրանից, որ ավարտական աշխատանքների
թեմաները պետք է առավելապես համապատասխանեն իրավագիտության վերջին
զարգացումներին և իրավակիրառ պրակտիկայի պահանջներին, նաև պետք է բացառվի
կատարված ուսումնասիրությունների ոլորտային լրիվ կամ մասնակի
համընկնումները:

2) Կարծում եմ լուրջ քննարկման նյութ պետք է դառնա
արտագրությունները բացառելու հարցը: Ակնհայտ է, որ էլեկտրոնային աղբյուրների
հասանելությունն այս խնդիրն առավել մտահոգիչ է դարձնում: Այս առումով՝
աշխատանքների ղեկավարները և գրախոսողները այս հարցին առանձնահատուկ
ուշադրություն պետք է դարձնեն: Իհարկե կան դեպքեր, երբ ներկայացված
աշխատանքի հեղինակը չհանդիսանալու հանգամանքը բացահայտվում է
ավարտական աշխատանքը ներկայացնելիս, երբ ուսանողը տեղյակ չի լինում այն
ոլորտից, որից ավարտական աշխատանք է ներկայացրել:

3) Ավարտական աշխատանքների պարագայում ավելի, քան մտահոգող էին
գրականության ցանկերը: Դրանցում հղում էր կատարված բավականին հին
հրատարակության տեսական աղբյուրների և ՀՀ վճռաբեկ դատարանի՝ բավականին վաղ

շրջանի որոշումներին: Հատկապես կարևոր է այն հանգամանքի շեշտադրումը, որ իրավակիրառ պրակտիկան շատ արագ զարգանում և փոփոխվում է, հետևաբար հին պրակտիկ նյութերի քննարկումը կարող է խնդրահարույց դարձնել աշխատանքի և դրա եզրահանգումների արդիականությունը:

Կարևոր է, որ պետական քննությունների հանձնաժողովին հաջողվեց ձևավորել զուտ քննական մթնոլորտ, փորձ արվեց հնարավորինս բացառել ավարտական աշխատանքները ներկայացնողների մոտ անհարկի հուզվածությունն ու շփոթվածությունը:

Ամփոփիչ ատեստավորման
հանձնաժողովի նախագահ

Ն. Կարապետյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի 2023 թվականի պաշտպանության մասին .

2023 թվականի հունիսի 7-8-ը տեղի ունեցավ հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության պաշտպանությունը՝ հետևյալ արդյունքներով .

Հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները .

գերազանց	լավ	Բավարար	անբավարար
0	3	4	3

Հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները .

գերազանց	լավ	Բավարար	անբավարար
4	2	3	3

Հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի 2023 թվականի պաշտպանությանը հիմնականում ուսանողները մասնակցում էին պատրաստված, ներկայացված աշխատանքները պարունակում էին ինչպես տեսական այնպես էլ պրակտիկ գիտահետազոտական նյութ: Առանձին դեպքերում աշխատանքները արտացոլում էին վերջին տարիների վիճակագրական տվյալները, զարգացման միտումները, ինչն առավել արդիական և արժեքավոր էր դարձնում ներկայացված աշխատանքների արժեքը:

Այնուամենայնիվ, ցանկանում եմ անդրադառնալ նաև այն բացթողումներին, որոնք ի հայտ եկան քննական գործընթացի շրջանակներում.

1) Աշխատանքները ներկայացնելիս էական նշանակություն ունի աշխատանք կատարողի գիտական ինքնուրույնությունը, կարծում ենք հնարավորինս պետք է բացառվեն այն դեպքերը, երբ աշխատանքի մեծ մասի հեղինակը աշխատանք ներկայացնողը չէ, ինչը հատկապես ակնառու է դառնում հրապարակային պաշտպանության ժամանակ:

2) Կարծում ենք մագիստրոսական թեզերի պաշտպանության թեմաները հաստատելիս էական ուշադրություն պետք է դարձվի թեմաների կրկնությանը կամ մասնակի համընկնմանը:

3) Ներկայումս պրակտիկ նյութի լայնածավալության և հասանելի լինելու պարագայում էական նշանակություն է ստանում դրա՝ համակարգված հետազոտությունը և ներկայացվածությունը: Որպեսզի աշխատանքը գերծ չլինի էմպիրիկ հիմքից, հեղինակները երբեմն մեջբերում են պատահականության սկզբունքով

ընտրված առանձին դատական ակտեր ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային դատական ատյանների՝ առանց համակարգված հետազոտություն կատարելու և բացահայտելու զարգացման հիմնական միտումները:

Կարևոր է, որ պետական քննությունների հանձնաժողովին հաջողվեց ձևավորել զուտ քննական մթնոլորտ, փորձ արվեց հնարավորինս բացառել ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր ներկայացնողների մոտ անհարկի հուզվածությունն ու շփոթվածությունը:

2023 թվականի քաղաքացիական մասնագիտացմամբ
Ավարտական աշխատանքների և մագիստրոսական
թեզերի պաշտպանության պետական
հանձնաժողովի նախագահ, ի. գ . թ .

Ն. Կար ապե տյ ան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի «Մեղիա և տեղեկատվական իրավունք» մասնագիտացմամբ մագիստրոսական ծրագրի 2023 թ. մագիստրոսական թեզերի պաշտպանության մասին

2023 թվականի մայիսի 23-ին տեղի ունեցավ «Մեղիա և տեղեկատվական իրավունք» մասնագիտացմամբ մագիստրոսական ծրագրի 8 մագիստրոսների մագիստրոսական թեզերի պաշտպանությունը՝ հետևյալ արդյունքներով.

գերազանց	լավ	բավարար	անբավարար	չներկայացած
5	3	-	-	-

«Մեղիա և տեղեկատվական իրավունք» մասնագիտացմամբ մագիստրոսական ծրագրի առաջին մագիստրոսները, լինելով այլ՝ հիմնականում լրագրողական ոլորտի աշխատակիցներ, աչքի էին ընկնում իրենց մասնագիտացման առավել խորը ընկալմամբ և ունեին բարձր պատրաստվածություն: Ներկայացված աշխատանքների որակը, մագիստրոսական թեզերի պաշտպանության մակարակը, ներկայացված առաջարկների՝ առավել իրատեսական լինելը ցույց է տալիս սույն ծրագրի արդյունավետությունը:

Մագիստրոսական թեզերը աչքի էին ընկնում ոչ միայն տեսական գրականության խորը և բազմակողմանի հետազոտությամբ, այլ նաև պրակտիկայում առկա մոտեցումների ուսումնասիրությամբ, նոր կառուցակարգերի առաջարկներով, ինչն առավել արժեքավոր է դարձնում կատարված աշխատանքների գիտական և պրակտիկ արժեքը:

Կարևոր է նաև այն, որ մագիստրոսները հիմնական ձեռնամուխ էին եղել այնպիսի թեմաներով գիտական հետազոտությունների, որոնք գտնվում են լրագրության և իրավագիտության հատման կետում, միաժամանակ արտացոլում են հասարակական հարաբերությունների վերջին զարգացումները և առկա խնդիրները:

Այնուամենայնիվ, ցանկանում եմ անդրադառնալ նաև այն բացթողումներին, որոնք ի հայտ եկան քննական գործընթացի շրջանակներում.

1) Ներկայացված մագիստրոսական աշխատանքներում գրականության ցանկերը հիմնականում ներառում էին ոչ իրավագիտական գրականություն, ասվել շատ էին ոչ գիտական, հանրամատչելի աղբյուրներին հղումները: Կարևորելով նաև այս աղբյուրների ուսումնասիրությունը, կարծում ենք, այնուամենայնիվ իրավագիտության մասնագիտացումը թելադրում է այս ոլորտի գրականության գերակշռումը:

2) Ընդունելով, որ ուսումնասիրության ոլորտը ունի իր առանձնահատկությունները, այնուամենայնիվ, կարծում ենք մագիստրոսական թեզերի պաշտպանության թեմաները հաստատելիս էական ուշադրություն պետք է դարձվի թեմաների կրկնությանը կամ մասնակի համընկնմանը:

3) Կարևորելով գիտական ազատությունը, միևնույն ժամանակ գիտական դեկավարների ուշադրության կենտրոնում պետք է լինեն կատարվող առաջարկները, դրանց արդյունավետությունը և խնդիրները: Հակառակ պարագայում ամեն

մագիստրոսական թեզի արդյունքում որևէ նոր մարմնի ստեղծման առաջարկ է արվում՝ հաշվի չառնելով դրա ռեալ լինելը կամ քննարկման առարկա չդարձնելով գործող կառուցակարգերի թերությունները:

Կարևոր է, որ պետական քննությունների հանձնաժողովին հաջողվեց ձևավորել զուտ քննական մթնոլորտ, փորձ արվեց հնարավորինս բացառել մագիստրոսական թեզեր ներկայացնողների մոտ անհարկի հուզվածությունն ու շփոթվածությունը:

Ամփոփիչ ատեստավորման

հանձնաժողովի նախագահ

Ն. Կարապետյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ» ԾՐԱԳՐՈՎ (ԱՌԿԱ) 2022-2023թթ. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՎԱ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

2023 թվականի մայիսի 29-ին և 30-ին տեղի է ունեցել վերը նշված կրթական ծրագրով ամփոփիչ ատեստավորման գործընթացը:

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են 32 ուսանողներ:

Ամփոփիչ ատեստավորման արդյունքներով 11 ուսանող ստացել է «գերազանց» գնահատական, 9 ուսանող՝ «լավ», իսկ մյուս 12-ը՝ «բավարար»:

Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվել են իրավագիտության ֆակուլտետի դեկանատի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Ամփոփիչ ատեստավորման գործընթացն իրականացվել է հրապարակայնորեն, առկա ձևաչափով՝ սահմանված պահանջների պահպանմամբ:

Հարկ է նկատել, որ թեմաների ընտրության ժամանակ հաշվի էին առնվել իրավական մտքի արդի զարգացումները և այն հիմնախնդիրները, որոնց իրավական կարգավորումները ժամանակակից հասարակական հարաբերությունների կանոնակարգման անհրաժեշտության տեսանկյունից հիմնականում առաջնահերթ և կարևոր նշանակություն ունեն:

Ավարտական աշխատանքների զգալի մասը ու դրանց հրապարակային պաշտպանությունն ուշադրության էին արժանի այն տեսանկյունից, որ դրանց հեղինակ ուսանողները նյութին տիրապետում էին խորքային ձևով, ունեին ներկայացման բարձր մակադակ, ինչն ընդգծում էր նրանց հետազոտական ունակությունները:

Միաժամանակ, հարկ է նշել, որ առկա էին որոշ աշխատանքներ, որոնք զերծ չէին թերություններից, մասնավորապես՝ աշխատանքների ձևակերպման որակի տեսանկյունից, այդ թվում՝ կատարված չէին անհրաժեշտ վերլուծություններ և եզրահանգումներ, կատարված չէին ինչպես միջազգային փորձի, այնպես էլ՝ ներպետական իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրություններ, աշխատանքներում առկա էին նաև մի շարք տեխնիկական թերություններ և բացթողումներ: Որոշակի դեպքերում էլ չէր ընդգծվում աշխատանքի կատարման

ինքնուրույնության բարձր մակարդակը: Առկա է նաև մտահոգություն առ այն, որ որոշակի ուսանողներ ավարտական աշխատանքների կատարման գործընթացում ակտիվ կերպով չեն համագործակցում իրենց ղեկավարների հետ, ինչը կատարելը թույլ կտար հաղթահարել վերը նշված թերությունների զգալի մասը և ավարտական աշխատանքները կդարձնե առավել ամբողջական:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ ավարտական աշխատանքների զգալի մասն իրականացված էր այդ աշխատանքներին ներկայացվող բովանդակային և ձևական պահանջների պահպանմամբ: Ներկայացված գրախոսականները ևս կատարված էին պատշաճ մակարդակով: Ավարտական աշխատանքների ղեկավարների և գրախոսողների որոշակի մասը ներկա էին ամփոփիչ ատեստավորմանը, որոնք անձամբ ներկայացրեցին ավարտական աշխատանքների վերաբերյալ իրենց նկատառումները:

«Սահմանադրաիրավական»

ծրագրով ամփոփիչ

ատեստավորման հանձնաժողովի նախագահ,

ի.գ.թ., դոցենտ Վերաքննիչ քաղաքացիական

դատարանի դատավոր Նարեկ Գաբրիելյան

05.06.2023 թվական

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ» ԾՐԱԳՐՈՎ (ՀԵՌԱԿԱ) 2022-2023թթ.
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

2023 թվականի հունիսի 9-ին տեղի ունեցավ վերը նշված կրթական ծրագրով
ամփոփիչ ատեստավորման գործընթացը:

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են 9 ուսանողներ, իսկ 2-ը չեն
ներկայացել:

Ամփոփիչ ատեստավորման մասնակցած 9 ուսանողներից 1 (մեկ) ուսանող
ստացել է «գերազանց» գնահատական, 1 (մեկ) ուսանող՝ «լավ», իսկ մյուս 7-ը՝
«բավարար»:

Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվել են իրավագիտության
ֆակուլտետի դեկանատի կողմից սահմանված ժամանակացույցին
համապատասխան:

Ամփոփիչ ատեստավորման գործընթացն իրականացվել է
հրապարակայնորեն, առկա ձևաչափով՝ սահմանված պահանջների պահպանմամբ:

Հարկ է նկատել, որ թեմաների ընտրության ժամանակ հիմնականում հաշվի են
առնվել իրավական մտքի արդի զարգացումները և այն հիմնախնդիրները, որոնց
իրավական կարգավորումները ժամանակակից հասարակական
հարաբերությունների կանոնակարգման անհրաժեշտության տեսանկյունից
հիմնականում առաջնահերթ և կարևոր նշանակություն ունեն:

Միաժամանակ հարկ է նշել, որ ի տարբերություն առկա կրթական ծրագրով
ավարտական աշխատանքների, այս դեպքում աշխատանքների զգալի մասը ու
դրանց հրապարակային պաշտպանությունը չէր առանձնանում աշխատանքների
հեղինակների կողմից նյութին խորքային ձևով տիրապետելու, ինչպես նաև
ուսանողների կողմից աշխատանքների ներկայացման բարձր մակարդակ դրսևորելու
տեսանկյունից: Այդուհանդերձ, 2 (երկու) աշխատանքի դեպքում հեղինակների
կողմից աշխատանքների ձևակերպման և ներկայացման որակը թույլ էր տալիս գալ
այնպիսի եզրահանգման, որ ուսանողները նյութը տիրապետում են խորքային ձևով,
ունեն հետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ:

Առկա էին աշխատանքներ, որոնք զերծ չէին թերություններից, մասնավորապես՝ աշխատանքների ձևակերպման որակի տեսանկյունից, այդ թվում՝ կատարված չէին անհրաժեշտ վերլուծություններ և եզրահանգումներ, կատարված չէին ինչպես միջազգային փորձի, այնպես էլ՝ ներպետական իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրություններ, աշխատանքներում առկա էին նաև մի շարք տեխնիկական թերություններ և բացթողումներ: Որոշակի դեպքերում էլ չէր ընդգծվում աշխատանքի կատարման ինքնուրույնության բարձր աստիճանը: Առկա է նաև մտահոգություն առ այն, որ որոշակի ուսանողներ ավարտական աշխատանքների կատարման գործընթացում ակտիվ կերպով չեն համագործակցել իրենց ղեկավարների հետ, ինչը կատարելը թույլ կտար հաղթահարել վերը նշված թերությունների զգալի մասը և ավարտական աշխատանքները կդարձնեք առավել ամբողջական և բովանդակալից:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ ավարտական աշխատանքները հիմնականում իրականացված էին այդ աշխատանքներին ներկայացվող բովանդակային և ձևական պահանջների պահպանմամբ: Ներկայացված գրախոսականները հիմնականում կատարված էին պատշաճ մակարդակով: Ավարտական աշխատանքների ղեկավարների և գրախոսողների մի մասը ներկա էին ամփոփիչ ատեստավորմանը, որոնք անձամբ ներկայացրեցին ավարտական աշխատանքների վերաբերյալ իրենց նկատառումները:

«Սահմանադրաիրավական»

ծրագրով ամփոփիչ

ատեստավորման հանձնաժողովի նախագահ,

ի.գ.թ., դոցենտ Վերաքենիչ քաղաքացիական

դատարանի դատավոր Նարեկ Գաբրիելյան

05.06.2023 թվական

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ

**ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի
Ուսանողական գիտական ընկերության**

2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակ

№	Միջոցառման բնույթը	Խորագիրը/ Թեման	Անցկացման օրը	Համառոտ նկարագրությունը
1.	Աշխատաժողով	«Հետազոտական մեթոդներ» թեմայով աշխատաժողով	02.02.2022	USC-ի հետ համագործակցությամբ կազմակերպվել է աշխատաժողով, որի արդյունքում ուսանողները սովորել են հետազոտական աշխատանքներ կատարելու գործնական և տեսական հմտություններ:
2.	Աշխատաժողով	«Գիտական աշխատանք պատրաստելու և իրավական ռեսուրսներից օգտվելու հմտություններ» Ի.գ.թ., դոցենտ Շուշանիկ Ղուկասյան	15.02.2023	Տիկին Ղուկասյանը ուսանողներին ներկայացրեց գիտական աշխատանք կատարելու ընթացքում առաջացող խնդիրները լուծման ուղիները և ուսանողները փորձեցին իրենք էլ կատարել փոքրիկ առաջադրանքներ՝ օգտվելով իրավական աղբյուրներից:
3.	Սեմինար	«Հեղինակային իրավունքը թվային միջավայրում» Մարիամ Ավագյան	16.02.2023	Քննարկվել են թվային միջավայրում, հատկապես՝ համացանցում հեղինակային իրավունքի խախտման և պաշտպանության հիմնախնդիրներ
4.	Սեմինար	«Կիրեռականացագործություն ների հիմունքները և տեղեկատվական	18.02.2023	Քննարկվել են կիրեռականացագործության դեմ պայքարելու

		անվտանգության կարևորությունը. ինչու՞ է այս ոլորտին տրվում առանցքային նշանակություն» Լայդենի համալսարանի ասպիրանտ, «Ինտերպոլ»- ի կրտսեր իրավաբան Վիկտորյա Մարտիրոսյան		արդյունավետ միջոցները և դրանց տարածվածության պատճառները:
5.	Սեմինար	«Համաչափության սկզբունքի իրավունկալում» Ի.գ.դ., պրոֆեսոր Գևորգ Դանիելյան	16.02.2023	Քննարկվել է համաչափության սկզբունքի դերը արդի իրավագիտության մեջ և դրա ընկալման փոփոխության պատճառները:
6.	Հանդիպում- դասախոսություն	CFTJ NGO-ի հետ հանդիպում և կազմակերպության տնօրենի կողմից դասախոսություն		Պարոն Գասպարյանը ներկայացրել է կենտրոնի գործունեության հիմնական ուղղությունները և փոքր դասախոսություն կարդացել պատերազմի վկաներից ցուցմունք վերցնելու իրավական կարգավորումների մասին:
7.	Գիտաճանաչողական այց	Այց «ՀՀ գլխավոր դատախազություն»	13.03.2023	ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողները հնարավորություն ունեցան այցելելու Գլխավոր Դատախազություն, լինելու Դատախազության թանգարանում:
8.	Գիտաճանաչողական այց	Այց «ՀՀ գլխավոր դատախազություն»	15.03.2023	infra
9.	Գիտաճանաչողական այց	Այց «ՀՀ գլխավոր դատախազություն»	17.03.2023	Infra
10.	Հանդիպում- դասախոսություն	Գլխավոր Դատախազի օգնական Աշոտ Եսայանի հետ հանդիպում- դասախոսություն	13.03.2023	Ներկայացվել են պաշտոնի առանձնահատկությունները և համակրգման տակ գտնվող գործերի հետ առնչվող որոշ հարցեր:
11.	Հանդիպում-	Սեփականության դեմ	17.03.2023	Ներկայացվել են պաշտոնի

	դասախոսություն	ուղղված հանցագործությունների դեմ գործերով վարչության պետ Արմեն Գրիգորյանի հետ հանդիպում- դասախոսություն		առանձնահատկությունները և համակրգման տակ գտնվող գործերի հետ առնչվող որոշ հարցեր:
12.	Օլիմպիադա	«Հոմի մասնավոր իրավունքից» առցանց	24.02.2023	Օլիմպիադային մասնակցել է ավելի քան 20 ուսանող ՀՀ բոլոր մարզերից և բարձր արդյունքներ գրանցած ուսանողները ստացել են մրցանակներ:
13.	Գիտաճանաչողական այց	Այց «Արդարադատության ակադեմիա»	03.03.2023	Ուսանողները ծանոթացել են Ակադեմիայի ենթակառուցվածքներին և տարածքին, ինչպես նաև մարզերից եկած ուսանողներին առաջարկվող հանրակացարանային պայմաններին: Ուսանողները նաև ծանոթացել են գրադարանին:
14.	Կլոր սեղան- քննարկում	«Սնանկության գործով կառավարչի դերը և կարգավիճակը սնանկության վարույթում» թեմայով Կլոր սեղան- քննարկում «ՀԱՊ» փաստաբանական գրասենյակի փաստաբան Տաճատ Ոսկանյան և սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյան	27.02.2023	Ներկայացվել է սնանկության գործով կառավարչի դերը սնանկության վարույթի ընթացքում, ինչպես նաև ակտիվ ուսանողները պարզևատրվել են նորահրատարակ գրքերով:
15.	Սեմինար	«Արբիտրաժի հիմունքներ» «Կոնցեռն Դիալոգ» փաստաբանական գրասենյակի կրտսեր գործընկեր, փաստաբան Լիլիթ Կարապետյան	28.02.2023	Սեմինարին ներկայացվեց արբիտրաժի և դատարանների հիմնական տարբերությունները, արբիտրաժի՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային տարբերակի հիմնական

				առավելությունները, ինչպիսիք են՝ վեճերի արագ լուծումը, գաղտնիությունը, արբիտրների մասնագիտացումը և այլն: Քննարկման առարկա դարձան նաև արբիտրաժային համաձայնության ընդհանուր էության վերաբերյալ որոշ հարցեր:
16.	Կլոր սեղան-քննարկում	«Ֆինանսական առողջացման վարույթը» թեմայով կլոր սեղան-քննարկում	02.02.2023	Պարոն Մարկոսյանը ներկայացրեց ֆինանսական առողջացման ծրագրի հասկացությունը և ամենակարևոր առանձնահատկությունները, ինչպես նաև ինստիտուտի վերաբերյալ գոյություն ունեցող օրենսդրական կարգավորումները, Պարոն Գրիգորյանը ուսանողներին ներկայացրեց որոշ խնդիրներ, որոնց բախվել է պրակտիկ գործունեության ընթացքում, այդ թվում՝ բանկի՝ որպես ապահովված պարտատերի ֆինանսական առողջացման վարույթի շրջանակներում ունեցած դերի վերաբերյալ: Իսկ պարոն Էլոյանը և պարոն Հովակիմյանը, լինելով Կոնվերս բանկի փաստաբաններ, ներկայացրեցին հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը:
17.	Սեմինար	«Միջազգային արբիտրաժի հիմնական կենտրոններն ու	02.02.2023	Բանախոսությամբ հանդես եկավ Արբիտրների ասոցացիայի խորհրդի

		կանոնները» թեմայով սեմինար		անդամ, «ILEX» փաստաբանական գրասենյակի ավագ գործընկեր՝ Արամ Խաչատրյանը: Բանախոսության ընթացքում նախ քննարկման առարկա դարձան միջազգային արբիտրաժային իրավունքին հայտնի պաթոլոգիկ արբիտրաժային համաձայնությունների վերաբերյալ առանցքային հարցեր, ապա նաև Նյու- Յորքի կոնվենցիայի, Հայաստանի կողմից այն վավերացնելու, միջազգային արբիտրաժի կարևոր կենտրոնների և կանոնների վերաբերյալ հիմնարար հարցեր:
18.	Օլիմպիադա	ՀՀ քրեական իրավունքից	09.03.2023	Օլիմպիադային մասնակցել է ավելի քան 20 ուսանող ՀՀ բոլոր մարզերից և բարձր արդյունքներ գրանցած ուսանողները ստացել են մրցանակներ:
19.	Գիտաճանաչողական այց	«Քվանտ» վարժարան այց	04.03.2023	Տեղի ունեցած հանդիպմանը ներկա գտնվեցին վարժարանի հումանիտար հոսքի աշակերտները:
20.	Սեմինար	«Բանախոսում է ուսանողը» Անահիտ Ալոյան	04.03.2023	Թեմա՝ «Քրեական իրավունքի հիմունքներ»
21.	Սեմինար	«Բանախոսում է ուսանողը» Սերգեյ Սարգսյան	04.03.2023	Թեմա՝ «Հանցակազմ»
22.	Սեմինար	«Բանախոսում է ուսանողը» Ամալյա Սարխոշյան	04.03.2023	Թեմա՝ «Պատիժ»

23.	Սեմինար	«Արբիտրաժի պրոցեսը» թեմայով դասախոսություն Ի.գ.դ., պրոֆեսոր Աիդա Ավանեսյան	07.03.2023	Բանախոսությանը քննարկվեցին արբիտրաժի ընթացակարգի այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ արբիտրաժի վայրը, արբիտրաժի գործընթացը Ադ հոք և ինստիտուցիոնալ արբիտրաժներում, արբիտրին բացարկ հայտնելու և այլ հիմնարար հարցեր:
24.	Սեմինար	«Էթիկայի ընդհանուր կանոններ և գործարար վարվելակերպ» թեմայով սեմինար Ի.գ.թ., դոցենտ Շուշանիկ Ղուկասյան	14.03.2023	Բանախոսությանը քննարկման առարկա դարձվեցին գործարար էթիկայի, շփման ոչ ակնառու սխալների վերաբերյալ հիմնահարցերը, հարցազրույցի հիմնական կանոնները, ինչպես նաև էլեկտրոնային հաղորդակցման մշակույթը:
25.	Սեմինար	«Արբիտրաժի ոլորտում օրենսդրական փոփոխությունները» խորագրով սեմինար ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դասախոս, ՀՀ ԱՆ «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի տնօրեն՝ Տիգրան Դադունց	14.03.2023	Սեմինարի ընթացքում նախ ընդգծվեց օրենսդրական փոփոխությունների դերը արբիտրաժի ոլորտում, ապա խոսվեց «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում, «Քաղաքացիական դատավարության» օրենսգրքում կատարված և սպասվող փոփոխություններից, ինչպես նաև ՀՀ-ում ստեղծվող արբիտրաժային կենտրոնի, դրա կազմավորման կարգի և այլ հիմնահարցերի մասին:
26.	Կլոր սեղան- քննարկում	«Արբիտրաժի ոլորտի հիմնախնդիրները և զարգացման միտումները»	16.03.2023	Պանելային քննարկման բանախոսներն էին՝ Ի.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ

		խորագրով պանելային քննարկում		քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Վահե Հովհաննիսյանը, ՀՀ Արբիտրների ասոցիացիայի նախագահ Արամ Օրբելյանը, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս, ՀՀ ԱՆ «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի տնօրեն Տիգրան Դադունցը: Դասընթացի արդյունքում ստացված գիտելիքները ավելի համապարփակ և ամբողջական դարձնելու նպատակով բանախոսներն անդրադարձան այնպիսի կարևոր թեմաների, ինչպիսիք են՝ արբիտրաժի դերի հստակեցման հիմնախնդիրները ՀՀ-ում, արբիտրաժային վճիռների կատարման հիմնախնդիրները ՀՀ-ում և օրենսդրական փոփոխությունները որպես ոլորտի զարգացմանը ուղղված օժանդակ գործիքակազմ: Ապա ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան պարոն Գագիկ Ղազինյանը նախ շնորհավորեց դասընթացի մասնակիցներին դասընթացը հաջողությամբ ավարտելու և ոլորտի վերաբերյալ ամփոփ գիտելիքներ ձեռք բերելու
--	--	------------------------------	--	--

				կապակցությամբ, ընդգծվելով նմանօրինակ միջոցառումներին ֆակուլտետի օժանդակության պատրաստակամությունը:
27.	Գիտաճանաչողական այց	Պ.Ի.Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոց այց	18.03.2023	Տեղի ունեցած հանդիպմանը ներկա գտնվեցին դպրոցի ավագ դասարանների աշակերտները:
28.	Սեմինար	«Բանախոսում է ուսանողը» Մերի Վանունի	18.03.2023	Թեմա՝ «Քրեական իրավունքի հիմնահարցեր»
29.	Սեմինար	«Բանախոսում է ուսանողը» Մարե Մինասյան	18.03.2023	Թեմա՝ «Քրեական դատավարության հիմնահարցեր»
30.	Սեմինար	«Հայաստանի՝ ICSID-ում ունեցած պատմական հաղթանակը» խորագրով սեմինար ՀԱՊ փաստաբանական գրասենյակի կառավարող գործընկեր, իրավաբանական գիտությունների թեկնածու պարոն Հայկ Հովհաննիսյան	21.03.2023	Ուսանողներին ընձեռվեց բացառիկ հնարավորություն՝ ծանոթանալու Հայաստանի՝ ICSID-ում ունեցած պատմական հաղթանակի մանրամասներին: Պարոն Հովհաննիսյանը ուսանողներին տրամադրեց նաև համապարփակ գիտելիքներ ներդրումային արբիտրաժի, արբիտրաժի ընթացակարգի և արբիտրաժի առանձնահատկությունների վերաբերյալ:
31.	Աշխատաժողով	«Ծանոթացում «Գիտական Արցախ» պարբերականում տպագրվելու չափանիշներին և պայմաններին» աշխատաժողով ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան, «AVE JUS» փաստաբանական	22.03.2023	Պարոն Հարությունյանն ուսանողներին ծանոթացրեց «Գիտական Արցախ» պարբերականում տպագրվելու չափանիշներին և պայմաններին, փոխանցեց իր անձնական փորձով ձեռք բերած գիտելիքները ու հմտությունները և

		գրասենյակի հիմնադիր, «Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ավետիք Հարությունյան		խորհուրդներ տվեց, թե հետագայում հետազոտություն կատարելիս և հողված գրելից ինչ հանգամանքներ պետք է հաշվի առնվեն:
32.	Օլիմպիադա	Միջազգային հանրային իրավունքից		Օլիմպիադային մասնակցել է ավելի քան 20 ուսանող ՀՀ բոլոր մարզերից և բարձր արդյունքներ գրանցած ուսանողները ստացել են մրցանակներ:
33.	Օլիմպիադա	Միջազգային մարդասիրական իրավունքից		Օլիմպիադային մասնակցել է ավելի քան 20 ուսանող ՀՀ բոլոր մարզերից և բարձր արդյունքներ գրանցած ուսանողները ստացել են մրցանակներ:
34.	Օլիմպիադա	Միջազգային քրեական իրավունքից		Օլիմպիադային մասնակցել է ավելի քան 20 ուսանող ՀՀ բոլոր մարզերից և բարձր արդյունքներ գրանցած ուսանողները ստացել են մրցանակներ:
35.	Սեմինար	ՌԴ Փաստաբանների Դաշնային Պալատի փոխնախագահ, ի.գ.դ., պրոֆեսոր Ելենա Ավագյան	17.04.2023	ՈւԳԸ-ն հյուրընկալեց ՌԴ Փաստաբանների Դաշնային Պալատի փոխնախագահ Ելենա Ավագյանին, ով անցկացրեք բանախոսություն նվիրված մտավոր սեփականությանը և վերջինիս պաշտպանությանն ուղղված կառուցակարգերին թվային տեխնոլոգիաների դարաշրջանում:
36.	Կլոր սեղան- քննարկում	«Ընտանեկան իրավունքի և երեխաների իրավունքների պաշտպանության արդի	19.04.2023	Հանդիպման ընթացքում բանախոսները ներկայացրին ընտանիքի իրավական

		հիմնախնդիրները» թեմայով քննարկում ի.գ.դ,ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ,պրոֆեսոր տիկին Աննա Մարգարյան և ի.գ.թ,ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ,ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր տիկին Նորա Կարապետյան		կարգավիճակը,հասարակու թյան մեջ դրա դերին և կարևորությանը առնչվող հարցերը:Քննարկվեցին ընտանեկան և հատկապես երեխաների նկատմամբ կիրառվող բռնությունները,դրանց կանխարգելման մեթոդները և հասարակության վարքագծի լավագույն մոդելը առ բռնություն:
37.	Միջբուհական գիտաժողով	«ԵրեմՈՒՆ» կրթական հկ- ի հետ համագործակցությամբ սիմուլյացիոն խաղի կազմակերպմանը նախորդող գիտաժողովի կազմակերպում և անցկացում օնլայն ֆորմատով	23.04.2023	Գիտաժողովին մասնակցել է ավելի քան 50 ուսանող ոչ միայն ՀՀ, այլև և առավելապես արտասահմանյան երկրներից:
38.	Սեմինար	«Կրիպտոակտիվները՝ որպես հասարակական նոր երևույթ» թեմայով սեմինար-քննարկում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, «Սիզմա լո գրուպ» իրավախորհրդատվական- փաստաբանական գրասենյակի ավագ իրավաբան,փաստաբան Տաթև Մարտիրոսյան	21.04.2023	Հանդիպման ընթացքում բանախոսը ներկայացրեց կրիպտոակտիվները և դրանց հասկացությունը,առանձնահ ատկությունները:Ինչպես նաև անդրադարձ կատարվեց կրիպտոակտիվների իրավական կարգավորման անհրաժեշտությանը:
39.	Սեմինար	«Պետական բյուջեի	26.04.2023	Բանախոսը խոսեց

		միջոցների ռացիոնալ օգտագործումը» թեմայով սեմինար ի.գ.թ,ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ,«Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի հիմնադիր Հասմիկ Ենգոյան		գնումների մրցույթների, դրա փուլերի, կազմակերպման առանձնահատկությունների և ոլորտում առկա խնդիրների մասին:
40.	Գիտաճանաչողական այց	Հայ-Ռուսական համալսարանին կից գործող «Ուսմունք» դպրոց	02.05.2023	Բանախոսության ընթացքում աշակերտներին ներկայացվեցին աշխատանքային իրավահարաբերությունների առանձնահատկությունները, որի համատեքստում անդրադարձ կատարվեց աշխատանքային պայմանագրի կնքմանն ուղղված իրավական պահանջներին: Ինչպես նաև, ներկայացվեց «Անհրաժեշտ պաշտպանությունը որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք» թեման, մասնավորապես՝ աշակերտները ծանոթացան անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմաններին, անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմանը, ոտնձգության և պաշտպանության միջոցների միջև համամասնության խնդրին և պրակտիկ իրավիճակների:
41.	Սեմինար	«Բանախոսում է	02.05.2023	infra

		ուսանողը» Մերի Վանունի		
42.	Սեմինար	«Բանախոսում է ուսանողը» Մարե Մինասյան	02.05.2023	infra
43.	Հանդիպում- դասախոսություն	Հանդիպում- դասախոսություն բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների հետ Դոկտոր Գուրգեն Պետրոսյանը միջազգային քրեական իրավունքի և միջազգային իրավունքի դասախոս է Ֆրիդրիխ- Ալեքսանդր Էրլանգեն- Նյուրնբերգի համալսարանում, Այխշտետ-Ինգոլշտադտի կաթոլիկ համալսարանում և ներկայումս նաև խորհրդատվություն է տրամադրում գերմանական խոշորագույն տեքստիլ ընկերություններից մեկին մարդու իրավունքների համապատասխանության վերաբերյալ	01.05.2023	Պարոն Պետրոսյանը ուսանողներին ներկայացրեց միջազգային քրեական իրավունքի հիմնական հասկացությունները, փիլիսոփայությունը և կարևորությունը: Քննարկվեց նաև Հայաստանի Հանրապետության կողմից Հռոմի ստատուտի վավերացման գործընթացը: Ուսանողները հնարավորություն ունեցան ուղղել իրենց հարցերը և ստանալ սպառիչ պատասխաններ:
44.	Հանդիպում- դասախոսություն	Հանդիպում- դասախոսություն ասպիրանտուրայի ուսանողների հետ Դոկտոր Գուրգեն Պետրոսյանը միջազգային քրեական իրավունքի և միջազգային իրավունքի դասախոս է Ֆրիդրիխ- Ալեքսանդր Էրլանգեն- Նյուրնբերգի համալսարանում, Այխշտետ-Ինգոլշտադտի	01.05.2023	Պարոն Պետրոսյանը ուսանողներին ներկայացրեց միջազգային քրեական իրավունքի հիմնական հասկացությունները, փիլիսոփայությունը և կարևորությունը: Քննարկվեց նաև Հայաստանի Հանրապետության կողմից Հռոմի ստատուտի վավերացման գործընթացը:

		կաթոլիկ համալսարանում և ներկայումս նաև խորհրդատվություն է տրամադրում գերմանական խոշորագույն տեքստիլ ընկերություններից մեկին մարդու իրավունքների համապատասխանության վերաբերյալ		Ուսանողները հնարավորություն ունեցան ուղղել իրենց հարցերը և ստանալ սպառիչ պատասխաններ:
45.	Հանդիպում- դասախոսություն	Հանդիպում- դասախոսություն ուսանողների հետ Դոկտոր Գուրգեն Պետրոսյանը միջազգային քրեական իրավունքի և միջազգային իրավունքի դասախոս է Ֆրիդրիխ- Ալեքսանդր Էրլանգեն- Նյուրնբերգի համալսարանում, Այխշտետ-Ինգոլշտադտի կաթոլիկ համալսարանում և ներկայումս նաև խորհրդատվություն է տրամադրում գերմանական խոշորագույն տեքստիլ ընկերություններից մեկին մարդու իրավունքների համապատասխանության վերաբերյալ	02.05.2023	Դոկտոր Գուրգեն Պետրոսյանը ուսանողներին ներկայացրեց Հռոմի ստատուտի երկու հանցակազմերը՝ «ցեղասպանությունը» և «մարդկության դեմ ուղղված» հանցագործությունները: Ուսանողները հնարավորություն ունեցան ծանոթանալ դրանց տարբերակիչ հատկանիշներին, որակման առանձնահատկությունների ն:
46.	Գիտաճանաչողական այց	Այց Սահմանադրական դատարան	11.05.2023	Հանդիպման ընթացքում ուսանողներին ներկայացվեց ՍԴ կառուցվածքը, լիազորությունները և դերը ՀՀ արդարադատության համակարգում: Ուսանողները հնարավորություն ստացան շրջել Սահմանադրական

				դատարանով և պատիվ ունեցան հանդիպել ՍԴ դատավոր Արթուր Վաղարշյանի և ՍԴ նախագահ Արման Դիլանյանի հետ:
47.	Այլ	Lex9-ի նախաձեռնող խմբի հետ հանդիպում և հետագա համագործակցության համաձայնագրի կնքում	21.05.2023	Ուսանողները քննարկեցին նորարարական գաղափարին վերաբերող որոշ հարցեր և օժանդակեցին ծրագրավորողներին մասնագիտական հարցերով:
48.	Սեմինար	«Հաշտարարության հիմունքներ» ի.գ.թ,ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ,հաշտարար Սիմոն Ֆարմանյան	10.05.2023	Բանախոսը խոսեց հաշտարարության պրոցեսի իրականացման,դրա իրավական կարգավորման,պարտադիր հաշտարարության ներդրման և հաշտարարին ներկայացվող պահանջների մասին:
49.	Սեմինար	«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ» ի.գ.թ,ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ,ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ Տիգրան Մարկոսյան	11.05.2023	Բանախոսը խոսեց ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի,դրա իրավական կարգավորման և ուսումնասիրված միջազգային փորձի մասին:
50.	Գիտաճանաչողական այց	Այց հակակոռուպցիոն դատարան	18.05.2023	Այցի ընթացքում ուսանողները շրջեցին դատարանով և պռակտիկ միջավայրում հանդիպեցին հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր քննող դատավոր Նարինե Ավագյանի և

				հակակոռուպցիոն քրեական գործեր քննող դատավոր, Հակակոռուպցիոն դատարանի նախագահ Խաչիկ Ղազարյանի հետ:
51.	Մրցույթ	Էսսեյների մրցույթ	24.05.2023	
52.	Օլիմպիադա	Քաղաքացիական դատավարություն	24.05.2023	
53.	Օլիմպիադա	Քրեական դատավարություն	24.05.2023	
54.	Օլիմպիադա	Վարչական դատավարություն	24.05.2023	
55.	Օլիմպիադա	Սնանկություն	24.05.2023	
56.	Օլիմպիադա	Արժեթղթեր	24.05.2023	
57.	Օլիմպիադա	Արբիտրաժ	24.05.2023	
58.	Օլիմպիադա	Պետության և իրավունքի տեսություն	24.05.2023	
59.	Մրցանակ	«Ֆիլիպպ Ջեսսափի անվան միջազգային դատախազ-մրցույթ»-ում «Լավագույն հայցադիմում» մրցանակ		Երեք ՈԻԳԸ-ականներից կազմված թիմը ստացել է «Լավագույն հայցադիմում» մրցանակը
60.	Մրցանակ	«Ֆիլիպպ Ջեսսափի անվան միջազգային դատախազ-մրցույթ»-ում «Լավագույն պատասխան» մրցանակ		Երեք ՈԻԳԸ-ականներից կազմված թիմը ստացել է «Լավագույն պատասխան» մրցանակը
61.	Մրցանակ	Նյուտնբերգի միջազգային դատախազ-մրցույթում միջազգային փուլի այցեքարտի ստացում գրանցած բարձր արդյունքների շնորհիվ	22.05.2023	Երկու ՈԻԳԸ-ականներից կազմված թիմը ստացել է Նյուտնբերգի միջազգային դատախազ-մրցույթում միջազգային փուլի այցեքարտի

ԵՊՀ Իրավագիտության Ֆակուլտետի ՈւԳԸ նախագահ / /Մարիա Հովհաննիսյան